

ՓՈՒՆԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարությունը և Իրանի Իսլամական Հանրապետության ֆիզիկական դաստիարակության
կազմակերպությունը (այսուհետ՝ Կողմեր),

ձգտելով զարգացնել համագործակցությունը ֆիզիկական դաստիարակության և
սպորտի բնագավառում, որպես երկու պետությունների միջև բարեկամական
հարաբերությունների զարգացման և ամրապնդման կարելուր և անհրաժեշտ տարր,
համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈՂՄԵՐ 1

Կողմերը համաձայնում են՝ սույն Փոխըմբռնման Հուշագրին և իրենց
պետությունների օրենսդրությանը համապատասխան, համագործակցություն իրականացնել
ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում:

ՀՈՂՄԵՐ 2

Կողմերը միմյանց կտրամադրեն անհրաժեշտ միջոցներ տեղեկատվության,
մարզական-սպորտային և գիտական փորձի փոխանակման համար:

ՀՈՂՄԵՐ 3

Կողմերը կխրախուսեն մասնագետների, բժիշկների և սպորտային մասնագետների
մասնակցությունը գիտական սեմինարներին և ֆիզիկական դաստիարակությանն առնչվող,
սպորտը բոլորի համար և սպորտային բժշկության թեմաներով խորհրդաժողովներին:

ՀՈՂՄԵՐ 4

Կողմերը կանցկացնեն համատեղ քննարկումներ համագործակցության ընդլայնման,
սպորտային նվաճումների արդյունքների հարցերի շուրջ, ինչպես նաև
կհամագործակցեն միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

ՀՈՂՄԵՐ 5

Կողմերը կաջակցեն միմյանց կապ հաստատելու մարզական լրատվության, ռադիոյի,
հեռուստատեսության և մարզական հրապարակումների միջոցով՝ իրենց երկրներում
ֆիզիկական դաստիարակության և սպորտի զարգացման նվաճումներին հասարակությանը
ծանոթացնելու նպատակով:

ՀՈՂՄԵՐ 6

Կողմերը կխրախուսեն թիմերի, մարզիկների, մասնագետների, մրցավարների
փոխանակումները: Այդ փոխանակումները կիրականացվեն դրանց վերաբերյալ Կողմերի
պետությունների ազգային ֆեդերացիաների, միությունների, ընկերությունների,
ակումբների և այլ սպորտային հաստատությունների միջև հաստատված ծրագրերին
համապատասխան, որոնցում կսահմանվեն փոխանակումների կարգը, ժամկետներն ու
ֆինանսական ապահովման պայմանները:

ՀՈԴՎԱԾ 7

Գործուղող Կողմը իր սպորտային կազմակերպությունների եւ ազգային ֆեդերացիաների միջոցով կհոգա պատվիրակության մեկնման եւ վերադարձի տոմսերի ծախսերը մինչեւ ընդունող Կողմի պետության մայրաքաղաք կամ նախօրոք համաձայնեցված որեւէ այլ քաղաք: Հյուրընկալող Կողմը կհոգա տեղավորման, սննդի եւ ներքին տրանսպորտի ծախսերը: Մնացած հարցերը կկարգավորվեն փոխադարձ համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Փոխըմբռնման Հուշագրի կիրառման կամ մեկնաբանման ընթացքում Կողմերի միջեւ ծագած տարաձայնությունները կլուծվեն խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Փոխըմբռնման Հուշագրում կարող են կատարվել լրացումներ եւ փոփոխություններ, որոնք կձեւակերպվեն առանձին արձանագրությամբ: Նշված արձանագրությունն ուժի մեջ կմտնի սույն Փոխըմբռնման Հուշագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով եւ կհանդիսանա սույն Փոխըմբռնման Հուշագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Փոխըմբռնման Հուշագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից եւ կգործի 5 տարի ժամկետով:

Փոխըմբռնման Հուշագրի ժամկետը կարող է երկարաձգվել հաջորդ հինգ (5) տարիների համար, եթե Կողմերից որեւէ մեկը գրավոր չծանուցի մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին սույն Փոխըմբռնման Հուշագրի ավարտից 6 ամիս առաջ:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Փոխըմբռնման Հուշագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն Փոխըմբռնման Հուշագրի գործողության ժամանակ սկսված ծրագրերի եւ նախագծերի կատարման ընթացքի վրա, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Կատարված է Երեւան քաղաքում, 2007 թվականի օգոստոսի 20-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն, անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Փոխըմբռնման Հուշագրի կատարման ընթացքում դրա դրույթների մեկնաբանման առնչությամբ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Memorandum of Understanding on Cooperation in the field of Sport
between Ministry of Sports and Youth Affairs of the Republic of
Armenia and Physical Education Organization of the Islamic
Republic of Iran

Ministry of Sports and Youth Affairs of the Republic of Armenia and
Physical Education Organization of the Islamic Republic of Iran hereinafter

"Parties",

inspired by the desire to develop contacts in the sphere of Physical Education and Sport as a means of strengthening friendship and improving mutual understanding between two states, have agreed as follows:

Article 1

The Parties agree to co-operate in the field of physical education and sport in accordance with this Memorandum of Understanding and legislation of their countries.

Article 2

The Parties will provide each other the necessary facilities for exchanging information, training and sport-scientific experience requested by the two countries.

Article 3

The Parties will encourage the participation of experts, physicians and sport specialists in scientific seminars and conferences on physical education, sport for all and sport medicine.

Article 4

The Parties will organize joint discussions and collaborate in the case of enlargement of co-operation, results of sport achievements within the framework of international organizations.

Article 5

The Parties will assist each other to make connection with sports press, radio, television and sports publications in order to acquaint the public with the achievements in the development of physical education and sport in their countries.

Article 6

The Parties will encourage the exchange of teams, athletes, experts, referees. These exchanges will be realized in accordance with corresponding programmes approved between National Federations, unions, associations, clubs and other sports organizations of the Parties based on the exchange procedure, dates and financial conditions.

Article 7

The dispatching Party will bear of its delegation for the round tickets to the capital or any other city by National Federations and Sport Organizations of parties like as Clubs that has been previously agreed upon. The host Party will bear the expenses of accommodation, meal and internal transportation. Other related points will be settled upon mutual consent.

Article 8

Any discrepancy in the execution or interpretation of the present Memorandum of Understanding shall be solved by the Parties through meetings and negotiations.

Article 9

According to the mutual agreement the Parties agrees that changes and additions may be done to this Memorandum of Understanding and they shall be compiled as separate protocols which shall enter into force according to the procedures for entering into force of this Memorandum of Understanding and shall be integral part of this Memorandum of Understanding.

Article 10

This Memorandum of Understanding shall enter into force on the date of the last written notification by diplomatic ways about completion of the Parties' internal procedure and shall be valid for a period of 5 /five/ years.

The terms of this Memorandum of Understanding will be extended for another period of 5/five years unless any of the Parties notifies the other in writing about its intention to terminate thereof not later than six months prior the expiration of this Memorandum of Understanding.

Article 11

In case of termination of the present Memorandum of Understanding, any programme of exchange of cooperation undertaken under it and not yet completed will remain valid until completion.

Done in Yerevan on August 20, 2007 in two originals, each of them in Armenian, Persian and English, each text being equally authentic.

In case of any divergence of interpretation of this Memorandum of Understanding during its realization, the English text shall prevail.

Ministry of Sports and Youth Physical Education Organization
Affairs of the Republic of of the Islamic Republic of Iran
Armenia

ARMEN GRIGORYAN

MOHAMMAD ALI ABADI